Զենքը՝ չեռքին, դեմքը՝ թշնամուն...

Ազատամարտիկ: Մարդիկ սովորաբար իրենց անուններն են ունենում: Բայց մարդկանց այս տեսակը, կարգը ուրիշ է, մի անուն ունի՝ Ազատամարտիկ: Նրանք նույնն են ճակատագրով, նպատակով, գործով և, երբ զոհվում են, զոհվում են նույն կերպ. դեմքը՝ թշնամուն, զենքը՝ չեռքին: Գագիկ Հակոբյանն էլ բացառություն չկազմեց: Զինվորագրվեց հայրենիքին արցախյան ազատամարտի առաջին իսկ կանչով ու մի օր էլ, պինդ–պինդ ողջագուրվելով հարազատների հետ, տանը թողնելով կնոջն ու 6 երեխաներին, գնաց... Իր մարտական մեքենայով, որի մեխանիկ–վարորդն էր, կռվեց Մարտակերտում, հետո մասնակցեց Ֆիզուլու ուղղությամբ թշնամու կրակակետերը լռեցնելու գործողություններին, սխրանքներ գործեց: Դրանցից մեկը հատկապես, ընկերները սիրում են հիշել: Գումարտակի հրամանատարի տեղակալ Սահակ Եղիգարյանի հետ հետևակի մարտական մեքենայով թափանցեց թշնամու դիրքերը, ճոպանով իր մեքենայի հետևից կապեց հակառակորդի «ԵՄՊ-2» –ը և բերեց: Ծիծաղելի վիճակում հայտնված ագերիները կատարված ուշացումով ըմբռնեցին և մինչ որևէ բան կչեռնարկեին, մեքենաներն անհետացան բլրակի հետևում: Մի օր էլ, այս տարվա օգոստոսի 22–ին, թշնամու հերթական կրակակետը գրոհելիս Գագիկը... Ոչ ոք չէր հավատում, չէին ուզում հավատալ, բայց եղածը եղել էր: Ծանր էր կորուստը հատկապես բազմանդամ ընտանիքի համար: Այս ցավով էլ խմբագրություն էին եկել գումարտակի հրամանատար Արթուր Ավանեսովն

ու տեղակալ Սահակ Եղիգարյանը, որոնց խնդրանքը մեկն էր. «Հայ զինվոր» –ի ընթերցողին տեղեկացնել, որ իրենք խնայբանկի Երևանի **8045–0111** բաժանմունքում Գագիկի երեխաների անունով գրքույկներ են բացել **24350, 24351, 24352, 24353, 24354 և 24355** հաշվի համարներով: Խմբագրությունը սիրով ընդառաջում է նրանց և վստահ է, որ բարերարներ անպայման կգտնվեն:

ԷԴԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ